

Հ. Տայյան

Ասիմովակի
Պրոֆին



891.99
S-13

ՀԱՅՊԵՏՐԱՍ

ՎԱԶԳԵՆ ՏԱԼՅԱՆ

891.995,
5-13 W

2011-07

ՍԱՀՄԱՆԱՊԱՀԻ ՈՐԴԻՆ

Նկարները
Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻ

INSTITUTE
OF DOCUMENTATION AND INFORMATION
SERIALS SECTION

ZU946SZRUS
ՀՀԿ 44 ԿԻՑ ՄԱՆԿՈՒՍԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1940


ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԵՐԱՍՈՒԾՄԻ
Ժ Ա Գ Գ Ա



1559
41

Վ. ՏԱԼՅԱՆ
ԸՆԻ ՊՈԳՐԱՆԻՉՆԻԿԱ
Արցա, Երևան, 1940



1

Սահմանային կոփի եղավ.
Մեր հոգն անցան ճապոնացիք,
Ու նրանց զեմ կովի ելավ,
Զարդեց նրանց ջոկն հրածիզ:
Եվ այդ կովի եռուն պահին
Թեժ գնդակից թշնամու նենդ,
Հերոսն ընկամ կանչը շուրթին.
— Դեպի առաջ...մենք կհաղթենք...

Մի ծովափնյա գյուղից էր այն
Մարտիկն անահ ու կրակոտ.
Տանը՝ կինն էր ու մի տղան.
Ապրում էին սահմանի մոտ:
Ուզեկալի պետը նրանց
Նամակ գրեց գորովանքով,
Թե՛ «Միմյանը հերոսացած
Ընկավ կռվում անմահ փառքով»:
Ու կարդացին մայր ու որդի
Նամակն այն ջերմ՝ գիրը արտում,
Կարդաց ողջ գյուղն հարազատի
Մահվան լուրը, ովը սրտում:



Մըմուռ սրտով, լի զայրուցթեվ
 Մայր ու որդի շուտ գնացին,
 Որ աճյունը սեր—հարգանքով
 Պահ տան հողին հերոսածին:
 Եվ տխրությունն, ինչպես մշուշ,
 Նստեց գյուղում ու դաշտում բաց.
 Ու երբ կրկին արևն զգույշ
 Ելավ ծովից աչքերը թաց,
 Գունդը ամբողջ գլխահակ, լուռ,
 Նրա զագաղն առած ուսին,
 Լուռ թախիծով, շարքերով կուռ,
 Քայլեց դեպի երեք սոսին:
 Հերոսն այնտեղ թաղվեց պատվով.
 Ծովի ծառոտ, բարձր ափին...
 Եվ փոթորկեց ծովս աղմուկով,
 Ցասկոտ զարկեց լերկ քարափին:
 Երբ տուն եկան, վշտով գրկեց
 Մայրը որդուն իր սիրելի,
 Տղան մորը համբույր տվեց
 Եվ դուրս վազեց մտքերով և
 Հետո ելավ կինը տխուր,
 Մխիթարված՝ ընկերներով,
 Փնտուեց որդուն, վնտուեց իզուր
 Եվ գորշ ձիուն՝ սև պուտերով:

2

Երեկո էր: Մութը զանդաղ,
 Թշնամու պես սահմանն անցավ.
 Ոռնաց քամին խենթուկ ու պաղ,
 Ուղեկալին զարկեց թռավ:
 Պահակատան պահակն հանկարծ
 Մի ձի տեսավ ձյունե փոշում՝



Արագավազ ու մոլեզնած
Դեպի իրենց կողմն էր թոշում:
«Չիու վրա ով կա արդյոք, —
Մտածեց նա, մղվեց առաջ. —
Չիավնր է, թե ձին է լոկ,
Թե ճամբորդ է ցըտից սառած...»
Սլացող ձին մեխվեց տեղում,
Ուղեկալի շեմքին մոտիկ.
Հեծյալն ընկափ թաղվեց ձնում,
Ապա իսկույն կանգնեց ոտի:
Երեխա էր ու դեմքը թուխ,
Ականջներով փափախ գլխին:
— Եյ, ով ես դու, այ տաք գլուխ...
— Ես ուզում եմ... տեսնել պետին... —
Ասաց հպարտ, ձայնով հուզված,
Սանձը բանած երիվարի,
Մտքերի մեջ խորասուզված,
Եվ հայացքում՝ վճիռն արի:
— Մի գործ ունեմ... խիստ կարեոր...
Թույլ տվեք ինձ տեսնել պետին:
Եվ նա տիսուը հառաչեց խոր,
Հայացքն հառած զուսպ պահակին:
Պետը լսեց իր սենյակում,
Գիրքը ծալեց ու զուրս ելավ.
Մի ծիավոր տեսավ բակում,
Բայց թե ով էր, նա չիմացավ:
— Այս մթանը ի՞նչ ես ուզում,
Որտեղից ես այդպես շտապ:
Ասա, քեզ ի՞նչ ցավ է հուզում,
Որ տիսուը ես, մոռայլ այդչափ:
— Սահմանապահ Միմյոնն էր իմ



Հայրը շահել... դոհվեց երեկ...
Մանր վշտից պետք ուշիմ
Մթնեց, ինչպես ամպոտ ցերեկ:
— Հիշում եմ քեզ, դու էլ մի օր
Լրտես տեսար մի խորամանկ.
Ճույց էր տալիս իրեն մոլոր
Այն «աղքատը» կորաքամակ:
Եվ նա գրկեց կիմի ուսերն

Ու տարավ իր սենյակը լույս:

Կիմը տեսավ պատին սուսեր,

Ծաղկամանում՝ փարթամ մի բույս.

Գրքի շարքեր պահարանում...

Ժամացույցի զարկերն ասես

Լոռության ծոցն էին կաթում

Մի համաչափ կաթիլքի պես:

— Դե, թշնամու նոր տեղ գիտես,

Ասա, պատմիր հերթով, կարգին...

— Դրա համար չեմ եկել ես,

Խոսքը կտրեց մեր պատանին:

— Լավ, ապա դու ինչու եկար, —

Ասաց պետք ու սպասեց.

Զմտածեց կիմը երկար,

Պատմի առավ, այսպես խոսեց.

— Ուզում եմ ես լինել մարտիկ

Հորս նման, մնալ այստեղ:

Չեզ պես մեծ չեմ, թեև փոքրիկ,

Բայց ընդունեք ինձ հորս տեղ:

Ես կրակել գիտեմ վաղուց,

Գիշերն անքուն էլ կմնամ...

Չեմ վախենա ես թշնամուց,

Չենքը ձեռքիս դեմ կդնամ



Մեկ էլ հանկարծ դեմք նրա
 Ասես կանգնեց հայրն առնաղեմ,
 Հրացանն իր պարզեց նրան՝
 — Կովիր,—ասաց, — թշնամու դեմ...
 Ու երդումի բառեր կրկին
 Այն պատանու շուրթից թռան,
 Արցունք կաթեց ծաղիկ գորդին,
 Շիթեր վշտի ու բարկության:
 Ուզեց առնել հրացանը հոր,
 Սեղմել նրա ձեռքը սիրով,
 Խոսք տալ նրան և ասեր, որ
 Կերթա նրա ճանապարհով...
 Սրբեց արցունքն իրա թեքով,
 Նետվեց առաջ նա գրկաբաց...
 Հայրը չկար... Սեղանի քով
 Պետն էր կանգնած նրա դիմաց:
 Պետը ժպտաց գորովալից,
 Գրկեց կիմին, ամուր սեղմեց.
 — Լավ, իմ տղա, այսօրվանից
 Ավելի շատ կօգնես դու մեզ:
 Երբ բարձրանաս մեր տարիքին,
 Մեր շարքերը կգաս և դու,
 Եվ սահմանը հայրենիքի
 Կպաշտպանես զենքով հատու:
 Փոքր ես հիմա, թե չէ սիրով...—
 Ասաց պետը սիրող մի հայր,
 Շոյեց նրան սիրագորով,
 Եվ աչքերին նայեց երկար:
 Կիմը կախեց գլուխը շեկ,
 Խոր հառաջեց, որ փոքր է դեռ...
 Չի մոռանա պետին երբեք,

Հայացքը ջինջ, հոնքերը կեռ:
 — Է՞ն, ինչ արած, սիրելի պետ,
 Երբ բանակի օրենքն է դա...
 Ես ձեզ կօգնեմ տղերանց հետ.
 Միշտ պատրաստ եմ, թե տեղը գա:
 Ասաց, հպարտ պատվի առավ,
 Ոտը ոտին զարկեց առույզ,
 Զինվորի պես նա շուռ եկավ,
 Քուրքը հազավ, հեծավ նժույզ,
 Շոյեց ձիու բաշը սիրուն,
 Ասպանդակեց մեղմիկ նրան,
 Վարդ թշերով տղան՝ գարուն,
 Թռավ անցավ ձյունոտ ճամբան:
 Պետի մտքերը խուռներամ
 Մեր փոքրիկի հետ սլացան.
 Եվ նա հպարտ, խրոխտ, անահ
 Կծկեց արագ խափար ճամբան:
 Ու մտածեց պետն անվեհեր
 Նայելով մութ հեռուն անխոս.
 «Ել ով կանցնի սահմանը մեր,
 Երբ հերոսն է ծնում հերոս...»:

1928 թիւ
 Երևան



Պատ-խմբագիր՝
Վ. Գ. Գ ո ր յ ա ն
Տեխ-խմբագիր՝
Ա. Յ. Գ ա ս պ ա ր յ ա ն
Մրագրիչ՝
Մ. Թ ո ւ մ ա ն յ ա ն

Վ. Ֆ 2671 Հրատ. 5350.

Պատվեր 694. Տիրաժ 3000.

Հանձնված է արտադրության 10/Խ—1940 թ.

Սառըագրված է սպազրության 25/Խ—1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65.

«Ազգային գրադարան»



NL0401575

ԳԻԱՆ 20 ԿՐՊ.

13246

